ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մայիսի 7-ին ՀՀ ԳԱԱ նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հանրապետական հոբելյանական նիստ՝ նվիրված Սանկտ Պետերբուրգի հիմնադրման 300-ամյակին: Նիստը ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը: Ստորև տպագրում ենք հոբելյանական նիստում ակադեմիկոսներ Ֆ. Սարգսյանի և Գ. Գալոյանի ելույթները, ինչպես նաև Ն. Սարուխանյանի և Ա. Աղասյանի հոդվածները:

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

ՀՀ Ազգային ժողովի հարգելի նախագահ
Հարգելի պարոն դեսպան
Հարգելի տիկնայք և պարոնայք

Ինձ բարձր պատիվ է վիճակվել բացելու Սանկտ Պետերբուրգի հիմնադրման 300-ամյակին նվիրված հանդիսավոր հոբելյանական նիստը:

Մարդկության պատմության մեջ կան տարեթվեր, որոնք չրջում են պատմության ընթացքը, գառնում են քաղաքակրթության սեփականություն, հոգու սուրբ մասունք: 1703 թ. մայիսի 27-ը ծննդյան օրն է մի քաղաքի, որի հետ մեզ կապում է ոչ միայն չնորհակալ հիշողությունը, այլ նաև հոգեկան մերձավորությունը: 300 տարի է բաժանում 1703 թ. գարունը 2003 թ. գարունից: Պատմության տեսանկյունից դա չատ կարճ ժամանակամիջոց է՝ Սակայն եթե թերթենք հիշողության էջերը, ապա կտեսնենք, որ անգոյությունից հայտնվում է մի քաղաք, որը դերում է իր նրբաճաչակ գլուխգործոց կոթողների վեհությամբ, կոթողներ, որոնք ստեղծվել են բազում սերունդների ձեռքերով և պահպանել են այդ ձեռքերի ջերմությունը: Թերթենք քաղաքի փառավոր կենսագրության էջերը՝ սկսած պետրոսյան առաջին բարեփոխումներից մինչև գիտությունների առաջին ակադեմիայի հիմնադրումը, Մարիինկայի փայլուն ներկայացումներից մինչև Էրմիտաժի եզակի գանձերը: Հարյուրամյակների ընթացքում ստեղծված մչակութային ժառանգությունը դարձել է մարդկության սեփականությունը, և հենց գա է պատճառը, որ Սանկտ Պետերբուրգի ծննդյան օրը մեզ բոլորիս համար գառնում է հոգու տոնախմբություն:

Հիշենք այն հեռավոր օգոստոսյան օրը, երբ չրջափակված Լենինգրադում ռումբերի և արկերի պայթյունների նվագակցությամբ առաջին անգամ հնչեց Շոստակովիչի յոթերորդ սիմֆոնիան: Ցավոք, այդ զարմանալի ներկայացման ականատեսների թիվը օրեցօր նվազում է: Մեր սրտերը վառ է պահում Հոգու այդ եզակի Տոնախմբությունը: Տարիներ անց հիասքանչ

Մարիինկայում առաջին անգամ հնչեցին Արամ Խաչատրյանի «Սպարտակ»-ի ոգեշունչ հայրական հնչյունները:

Մենք շնորհակալ ենք Դեզարվեսի ակադեմիային, որտեղ բոլոր ելույթներով փայլատակեց Հովնաթանյանի, Այվազովսկու արվեստը, որտեղ անցան Մինասի ուսանողական տարիները, մարմնավորվեցին երիտասարդ Թամանյանի ճարտարապետական երազանքները:

Դժվար է գերագնահատել «Հյուսիսային մայրաքաղաքում» իրենց գործունեությունը սկսած գիտնականների հսկայական ավանդը գիտության զարգացման գործում: Հիշենք Ալիխանյան եղբայրներին, որոնք տարիներ շարունակ աշխատել են Լենինգրադի Ֆիզիկատեխնիկական ինստիտուտում: Մեր գիտության լեգենդին՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին: Հենց նրա ջանքերով, 1961 թ. Բյուրականի աստղադիտարանին կից բացվեց Պուլկովյան աստղադիտարանի հարավային բաժանմունքը: Պավլովի փայլուն աշակերտներից էր Էրդաց Հասրաթյանը, որի աշխատությունները պատիվ են բերում հայ ժողովրդին: Քաղաքի կենսագրության կերտողներ են նաև Օրբելի եղբայրները, Կարեն Պատկանովը: Մենք շնորհակալ ենք Հյուսիսային մայրաքաղաքին, որտեղ առաջին անգամ Գրիգոր Խալդարյանի ջանքերով հիմնադրվեց և սկսեց գործել հայկական ասպարեզը: Այս քաղաքում շուշեցի հասարակ մի երիտասարդ հնարավորություն ստացավ դառնալու համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական: ՀՀ ԳԱԱ և մի շարք միջազգային ակադեմիաների անդամ Արմեն Թախտաջյանը մեզ համար դարձել է գիտության գրաղվողների խորհրդանիշ:

Պիտերսբուրգի գերդաստանի հետ բարեկամությունը սկսվեց Հայաստանի հանդեպ ավագ Պիտերսբուրգի մեծ նվիրումի զգացումից: Կարմիր Բլուրը Օրբելու արժանի հետնորդի առաջին սիրո հանգրվանն էր: Հենց Երևանում ծնվեց նրա առաջնեկը՝ Միխայիլ Պիտերսբուրգին, որը տասնամյակներ անց, լինելով Էրմիտաժի տնօրեն, Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարության շրջանակներում Սանկտ Պետերբուրգի Պետական համալսարանում բացեց «Հայերը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովը և հենց այդ հոբելյանը անվանեց նշանակալից ամբողջ աշխարհի համար:

Բարեկամի հոբելյանը նաև մեր հոբելյանն է: Մենք հիշելու շատ բան ունենք:

Փլուզվել են պետություններ, ձևափոխվել հասարակական-տնտեսական կարգեր, վերափոխվել սահմաններ, զոհաբերվել մարդկային ճակատագրեր, սակայն, անկախ այդ ամենից, հաղթել է Հոգին: Մեր երկու ժողովուրդները արժանի են իրենց բարձր քաղաքակրթությանը: Քաղաքակրթությունը ողջ է, քանզի աշխարհին լույս են սփռում Էրմիտաժի կտավները, հնչում են Շոստակովիչի երաժշտությունը և Կոմիտասի ընդհատված երգը:

Շնորհավորում ենք Սանկտ Պետերբուրգի փառապանծ հոբելյանը:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ